

ՄԱՍԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարւան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Маск».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է ֆ օ ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր ըստ 2 կոպէկ.
Տ է լ է ֆ օ ն № 253.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներքին Տեսութիւն. Մամուլ. Պարտիզ
Շահր Բազում. Նամակ Կարսից. Նամակ Խմբա-
գրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵ-
ՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
Հայկական տպագրութիւն.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հայ ընթերցողները կարող են յուզվել. նը-
րանց դեռ բոլորովին չէ թողել «կովկասեան
հրապարակասօս», Կովկասի հայոց մամուլի
պատմագիրը, տեսակ-տեսակ բրօշուրների հե-
ղինակ եւ այլ եւ այլ, զանազանակերպ պա-
տուանունների տէր ու տնօրէն Յարոն. Երե-
ւակայեւ կարելի է թէ ինչ կը լինէր հայ ըն-
թերցողի գրութիւնը, եթէ պարոն Յարոն յա-
ճախ լոյս ընկնէր իր գրչի հետ մեր գրական
«խոսքան» ասպարէզում: Բարեբաղդութիւն է,
որ նա, ինչպէս ժամանակին նկատել է Մշա-
կի» տաղանդաւոր Ասիացին, իր գրական գոր-
ծունէութիւնը տանում է լեթերգիայի եւ-
թարկված մարդու նման. այսօր մի յօդուած,
յետոյ հինգ, վեց կամ նոյն իսկ տասը տարի
լուծվին. ապա դարձեալ մի յօդուած... Չենք
յիշում թէ վերջին անգամ ինչ է գրել պ. Յա-
րոն եւ ինչի մասին. բայց այժմ մեր առջեւ
է «Հանդէս Ամսօրեայի» վերջին համարը, որի
դարդը, անկասկած, «Բառասանակ ախտի հե-
տեւանքներ» յօդուածն է: Յարոյի ստորագրու-
թեամբ ի՞նչն է այդքան անհանգիստ արել
կովկասեան լեթերգիական հրապարակասօսին:
Օ՛, մի մեծ դժբաղդութիւն. Թիֆլիսի հայե-
րէն հրատարակութիւնների մէջ գործ են ած-
վում եւ օտար բառեր, ինչպէս են, օրինակ,
«Կորնապոնդիւն», «Կապիտալ», «Դաստա» եւ
այլն: Խեղճ կովկասեան հրապարակասօս. ե-

րեւի, լեթերգիական անդգագութիւնն է պատ-
ճառ, որ նա չէ նկատել թէ այդ մասին շատ
եւ շատ են խօսել «Հանդէս Ամսօրեայի», «Բազ-
մալէպը», «Անահիտը», ասացել են պատաս-
խաններ, բայց հարկաւոր են համարել լուս
մնալ. չէ նկատել, եւ այժմ փրփուրը բերանին
նիզակներ է վարդում այդ «հին նորութեան»
համար: Նախ եւ առաջ մի նմուշ տանք թէ
ինչպէս է գրում հայերէն լեզուի համար խաչ-
վող այս հայկաբանը:

Արդարեւ՝ թէ եւ արդի հայ գրական լեզուի
քերականութեան բոլոր վերջնական կանոն-
ներն ու ձեւերը, նորութիւններն ու բա-
ղաձայնները, նոր բոլոր բառերն ու ա-
սացումները, ոճերն ու դարձուածները եւ
այլն հայ ճանապարհական (ակադէմիական)
հեղինակաւոր գիտնական մի կանաչով վերջ-
նականապէս վճռված, որոշված եւ հաս-
տատված չեն, որով առիթ է ներկայանում
չափերին քննարկելու եւ ըստ մեծի մա-
սին տգիտաբար ծոմելու, յեղաշրջելու, դէն
ձգելու դարաւոր գործածութեամբ արդէն հա-
սարկալօրէն ընդունված եւ գոյութեան իրա-
ւունքին հասած որոշ բառերն ու ձեւերը եւ
այլն, բայց միթէ, իրաւ, վերջապէս դարձու-
ածները ընթերցողն գտնէ թէ արեւմտեան
եւ թէ արեւելեան հայոց յաւերժացիւթեան
ու հանրածանօթ բանաստեղծներն ու մա-
տենագիրները, հեղինակներն ու թարգմա-
նիչները, լեզուագէտներն ու քերականները
իրանց արդիւնաւոր աշխատանքներով
եւ ընտիր երկերով այնչափ խեղճ ու ան-
մշակ լեզու տուին մեր այսօրվայ «գրող»
սերունդին, որ հասարակ մտքերն ու պարզ
հայերէն բառերն անգամ չը կարողանայ ար-
տաշատել հայերէն լեզուով:

Անկասկած «յաւերժացիւթեան» տես-
նելով այս սոսկալի պարբերութիւնը, այս ան-
միտ ու բուրբ բարակոյտը, ամենից առաջ Յա-
րոյին պիտի ապերախտ ու անշուքը «գրող»
անուանեն. յետոյ նրանց պիտի դարձանան
«Հանդէս Ամսօրեայի» խմբագրութեան վրա, որ
տեղ է տուել այդ պարոնի «հէմէրիական» յօ-
դուածին: Վիեննայի հայկաբան վարդապետ-
ները սովորել են վայնասուն բարձրացնել օ-

տարագրի բառերի դէմ, բայց ինչ է դուրս գա-
լիս գրանից: Գիտեն հայկաբանները, որ հայոց
լեզուն, ինչպէս եւ ամեն մի ուրիշ կենդանի
լեզու, նոր չէ ընդունում իր մէջ այնպիսի բա-
ռեր, որոնց ինքը չունի. գիտեն որ առանց
օտար բառեր գործածելու չէ կարելի խօսել
ժամանակակից շատ երեւոյթների մասին. եւ
փոխանակ ճարը ցոյց տալու, փոխանակ իրանց
անհուն հայկաբանութիւնից բառեր հանելու,
օրինակ, ժամանակակից հագուստները նկա-
րագրելու, մեքենաների անունները տալու հա-
մար, միայն բողբոլում են իրանց, այդ հայ-
կաբանները, ժամանակակից նիւթերի մասին
չեն խօսում: Ազգայնագիտական ու կալուս-
թիւնական եւ զբաղված եւ դարձեալ չեն կա-
րողանում առանց օտար բառերի գլուխ պահել.
եւ ինչ որ պահանջում են, որ օրվայ դէպքերի,
նոսր ժամանակի մասին խօսողը միմիայն մա-
քուր հայերէն բառեր գործածէ: Մենք չափ
անգամ ենք խօսել այս առիթով եւ այժմ միայն
կրկնած կը լինենք մեր միտքը, եթէ ասենք, որ
անմիտ ու անհիմն է մի պահանջ, եթէ նա
իրական փաստերի վրա չէ հիմնված. որ «Եր-
թականութիւն» պէտք է գրել եւ ոչ թէ «Կօ-
րնապոնդիւն»—այդ ինքը ըստ ինքեան հաս-
կանալի է, առանց Յարոնի «հէմէրիական»
ոլորտի էլ. բայց երբ մեր առաջը գալիս են
այնպիսի խօսքեր, ինչպէս են «պերա», «կու-
տուրա», «կապիտալիզմ», «ասօն», մենք գործ
ենք անուշ այդ բառերը, համոզված լինելով
որ հայոց լեզուն դրանից չը պիտի անհետանայ,
ինչպէս չէ անհետացել Վ դարում, երբ փոխ էր
առնում յունարէնից նոյն իսկ «եկեղեցի» բա-
ռը: Մեր ընթերցողները, երեւի, յիշում են թէ
վերջին տարիներում մի քանի թուոյ հայկա-
բաններ ինչ ջանքեր են անում օտար գիտա-
կան բառերի տեղ հայերէն բառեր հնարելու
համար: Եւ ինչ արդիւնք են ունեցել այդ սրը-
նացաւ ամենագիտները, նոյնք, ինչ ունեցել են
նուսաց մէջ այն չօլիմիստները, որոնք առա-
ջարկում էին «ТАЛОМ» բառի տեղ գործածել

գործունէութեան նախահայրը ամենայն իրա-
ւունքով Գեօմիւրեանը պիտի համարվի: Ան-
շուք, նա կարող էր աւելի բեղմնաւոր տպա-
գրիչ լինել, որովհետեւ մի շատ լաւ պատ-
րաստված, հասկացող մարդ էր. բայց, ինչպէս
երեւում է, ժամանակակից հանգամանքները
աւելի զօրեղ հանդիսացան, այնպէս որ նա
ստիպված եղաւ բաւականապէս երկու տեսակ-
ների հրատարակութեամբ:

Բանն այն է, որ ապրելով մի խռովացող ժա-
մանակում, երեմիա Չէլէպին ձեռքերը ծալած,
անտարբեր չը մնաց: Իբրեւ մի հմուտ աշխար-
հակալ հեղինակ, նա մէկն էր այն հազուադիւ-
մարդկանցից, որոնք երեւակային են մեր պատ-
մական անցեալում, դարերի այն երկար շրջա-
նի մէջ, երբ գրագիտութիւնը, մանաւանդ
հեղինակութիւնը հոգեւորական դասի ար-
տօնութիւնն էր կազմում: Մինչեւ երեմիայի
ժամանակները մեր պատմութիւնը շատ չէ
ճանաչում այնպիսի աշխարհականներ, որոնք
նրա պէս պատկառելի զիջք գրաւէին իբրեւ
լեզուագէտ, իբրեւ հեղինակ, մի խօսքով իբ-
րեւ լուսաւորված մարդ: Եւ Քէօմիւրեանը
խոցի հեղինակ չէր, ոչ էլ իրանց գիտնակա-
նութեամբ անմատչելի ու բարձրագոյն մարդ-
կանցից մէկը. նա գործում էր ժողովրդի մէջ,
որոնք ծառայեցին իր հասարակական գործիչ
էր գրեւ-
րի միահար այդ մարդը եւ այնքան խելօք ու
հասկացող, որ նոյն իսկ հոգեւորականութիւնը
գիմում էր նրա խորհուրդներին, շատ դէպքե-
րում հպատակվում էլ էր նրա հեղինակաւոր
խօսքին:

*) Բնորոշ է Առաքել պատմագիր վերաբնութեանը
դէպի աշխարհականները: Դամեալով խօսել ջողա-
ւում հոգեւորական շրջանում վարչական մասին, նա
հարկ է դրում նախ գրել աշխարհի խօսքը. «Պարտք
եւ համարում իրեն ականատես զանց չանել եւ ուրիշ
չնորհալի մարդկանց, թէպէտ եւ դրանց աշխարհական-
ներ են, բայց հաստատ քրիստոնէայ են եւ ազգով հայ»
(ը. տպագր., էր. 403): Դարձեւ պատմագիր մի կերպ
ներդրութիւն է խելովում, որ ինքը, լինելով վարդա-
պետ, պիտի խօսէ իր գրքի մէջ աշխարհական, թէ
չնորհալի մարդկանց մասին...

«МОРОСЪ» Չափ պէտք է ճանաչել...
Յամենայն դէպս, Վիեննայի հայկաբանները օ-
տար բառերի հարցը չեն լուծում նրանով, որ
երբ հարկադրված են լինում գործածել մի
օտար բառ, նրանք այդ բառը գրում են ոչ
թէ հայկական, այլ լատինական տառերով: Հար-
ցը չէ լուծվում մանաւանդ Յարոնի «հէմ-
էրիական» զառանցանքները տպագրելով...

Մենք միշտ մի առանձին զուարճութեամբ
ենք նայել թէ ինչպէս «Տարազ» չարաթաթեր-
թը միջին կէս է լինում խելօք ու հաս-
կացող երեւակաւ եւ ուրիշներին (այսինքն
«Մշակ») անհասկացող, խեղճալի ցոյց տալու
համար: Իր վերջին համարում «Երեւոյն»
կանոն չարաթաթերթը ուղղում է մի բան ասել
այն յօդուածների մասին, որոնք վերջերս լոյս
տեսան «Մշակի» մէջ: Ներսիսեան զարդոյի հո-
գարարական ընտրութիւնների առիթով: Բայց
պարզ գրագիտութիւնը, այնքան սպանված է
ճիգրան նազարեանի խմբագրութեան մէջ, որ
մենք ոչինչ չը հասկացանք: Եւ ինչ կարելի է
հասկանալ մի այլ տեսակ նախադասութիւնից.
«Մշակի» մէջ լոյս տեսան պ. Տ. Յ.-ի
յօդուածները, որոնք փոքր ի շատ իրական
նշանակութիւն ունեն են նրա յօդուածների
երեք կարճամիտ եւ նեղ պատասխաններ,
որ ցոյց է տալիս թէ այդ առաջադէմ հա-
մարված թերթը օպորտունիստական ձրգ-
տուններից հեռու չէ (տեսնում էք, ինչ
«խուր տկնմէն» խօսելի գիտեն ճիգրան նազա-
րեանի գործակիցները), բայց նրանք էլ աչ-
քի ընկնող նշանակութիւն չունենում:

Ընդունենք թէ անգագիտութեան այս
մարգարիտը ցոյց է տալիս թէ «Տարազը» չէ
բարեհաճում մեզ հաւանել: Շատ լաւ: Բայց
այդ խօսքերից յետոյ նա դիմում է «Արեւելք»
լրագրին եւ ասում է, թէ այնտեղ տպված են
մեր դարոյական եւ տեսչական հարցի մասին
երկու յօդուածներ, «որոնք սկզբից մինչեւ
վերջը կրում են ճշմարտութեան գոյն»: Շա-
րաթաթերթի խմբագրութիւնը հրապարակ է այդ
երկու թղթակցութիւններից, ասում է, որ

Տարաթաթաբար, մենք շատ աղքատիկ տե-
ղեկութիւններ ունենք այս նշանաւոր գործիչի
կենսի մասին: Յայտնի է այնքանը, որ Քէօ-
միւրեանը շատ գործունէաց դեր է կատարել
Կ. Պոլսի եւ Երուսաղէմի խառնակութիւնների
եւ անկարգութիւնների ժամանակ: Նա Մար-
տիրոս Կաֆայեցու անձնական շարեկամ էր
եւ քարտուղարը: Մօտիկ կանգնած լինելով
պատրիարքական աթոռի չորսը կառույցներին,
նա աշխատում էր մեղմացնող, հաշտեցնող դեր
կատարել: Որովհետեւ չարիքը միանգամայն ար-
մատախիլ անել չէր կարելի, ուստի Երեմիային
մնում էր օրքան կարելի է շատերին համոզել,
թէ ինչ դժբախտութիւններ են ծնեցնում ան-
ուսման ու անվերջ գոտիութիւնները: Նա ջանք
չէր խնայում կուռքների բռնկված կրքերը
հանգցնելու համար, գրում էր, անձամբ գոր-
ծում էր, խրատում: Երբ Եղիազարը ստացաւ
առանձին կաթողիկոսութեան հրովարտակ, Կ.
Պոլսում գտնվեցան հայեր, որոնք սարսափա-
հար եղան այն պառակալութեամբ, որ մոյցները
ազդի մէջ այդ փառաւոր կղերականը Երեմիա
Չէլէպին այդպիսիների գլուխ անցաւ եւ նը-
րանց կողմից պատգամաւոր դասը Եղիազարի
մօտ, Բերիա, խօսելու եւ հասկացնելու համար:
Երկար ժամանակ նա համոզում էր Եղիազա-
րին յետ կանգնել թերթահայերի համար ա-
ռանձին կաթողիկոսութիւն հիմնելու մտքին,
հասկացնում էր թէ ինչ վտանգներ են կապ-
ված այդ քայլի հետ: Բայց դուր էին նրա բո-
լոր ջանքերը...

Տեսնելով որ ոչ մի քարոզ, ոչ մի ապացոյց
չէ ազդում, Քէօմիւրեանն այնուհետեւ աշխա-
տում էր գտնէ մեղմացնել այն կատաղութիւնը,
որով Եղիազարն ու Մարտիրոս Կաֆայեցին
կուռք էին իրար. դէմ, մի կուռ, որից միայն
խռովութիւնների քառան էր տալիս ու վրա լի-
նում, առանց գրական որ եւ օգուտ տալու:
Այն, անհաշտութեան եւ վայրենի կրքերի բո-
ղբը հանգցնելն էլ այն տխուր ժամանակնե-
րում բարեբարութիւն էր: Այնքան հեռու էին

Բ Ա Ն Ա Ս Ո Ւ Ր Ա Վ Ա Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

XI

Դեռ Արգար Թօխաթեցու մասին խօսելիս
մենք ընդգծեցինք այն կարեւոր նշանակու-
թիւնը, որ վիճակվում էր Կ. Պոլսին հայկա-
կան տպագրութեան գործի մէջ: Արգարը, հար-
կադակած լինելով իր գործունէութիւնը մի այլ
սեղ փոխարեկ, ընտրել, ինչպէս գիտենք,
թիւրքաց մայրաքաղաքը: Կ. Պոլսի հայութիւ-
նը, ինչպէս Հայաստանին ամենից մօտ մի խո-
չոր գաղթականութիւն, այն փոքր ի շատ
լարմար միջնադարն էր, ուր հայոց եկեղեցին
կարող էր ազատ, առանց կաթողիկոսական
թեան խտուրթիւններին ենթարկվելու, օգտվել
տպագրական մամուլից իր պէտքերի համար:
Սակայն Արգարի ժամանակից անցաւ հարիւր
տարուց աւել, եւ Կ. Պոլսը տպարանական
ոչինչ գործունէութիւն ցոյց չը տուէր: Հայ
վարդապետները Երօպայի հեռաւոր կողմերում
էին ազատ մամուլի տեղ որոնում. ինչպէս էր,
որ Կ. Պոլսը, նրանց ճանապարհի վրա գտնու-
վելով, չը կարողացաւ կայան դառնալ նրանց
ուզած տպարանի համար եւ հարիւր տարվայ
ընթացքում մի տպագրած տող էլ լոյս չը
հանցէ:

Մեզ արդէն ծանօթ փաստերը հասկացնում
են, թէ ինչ էր այդ երեւոյթի պատճառը: Մի
տեղ, ուր բարձրը կատարեալ վայրենացման
են հասնում, ուր սանձարձակ կրքերը, հալա-
ժանքները, փոխադարձ մատնութիւնները տալիս
ու վրա են անում հասարակութիւնը ամբողջ
դար, ստեղծելով համարեա մի մշտական անա-
րկի դրութիւն, տէրրոր.—մի այնպիսի տեղ
չէին կարող պատուաւորել առհասարակ կու-
տուրական ձեռնարկութիւններ եւ մանաւանդ
տպարան, որ պահանջում է որոշ աստիճանի

առաջացած ծախսերը: Այն բոլոր լուրերը որոշակապես փոխանակված մասին, որոնք հաղորդվում են հեռագրական գործակալությունների կողմից և լրագրության, բլյուստ ևն զանազան ապեկուլանսներով, որոնք մշտապես, բայց բոլորովին առանց անդուլթեան, իրանց ծառայություններն են առաջարկում ֆինանսների մինիստրությունները:

ՏԵՆԱԶԻՆ, Անգլիական հրապարակագիրները և թղթագրությունները յետ են կանչված դեպի Հոնգկոնգ: Անգլիական-չինական գոտիք վերադառնում է վեյ-կայ-վեյ: Գերմանական դեսպանատան քարտուղար Ֆոն Բոլեն ուղևորվեց Պեկին: Դեսպան Մուսմեն դեսպանատան միացած կազմի հետ միասին մոտ օրերումս նոյնպես կուղևորվի այնտեղ:

ՎԱՇԻՆԳՏՈՆ, Անգլո-գերմանական համաձայնության պայմանները պայտանապես դեռ եւս չեն հաղորդված արտաքին գործերի մինիստրություններին, այսու ամենայնիւ: Վաշինգտոնում ընդհանուր գոտիքին է տրվում համաձայնության առթիվ: Կառավարչական չըջաններում մասնացոյց է անում այն հանգամանքի վրա, որ Գեյլի յունիսի 20-ի յայտագրով յայտնված էր, թէ Միացեալ-Նահանգները քաղաքականութիւնը, ի միջի այլոց, կայանում է Զինատանի հողային և վարչական ամբողջութեան նոյնպէս և չինական պետութեան բոլոր մասերում ամբողջ աշխարհի համար առեւտրի հաւասար իրաւունքի սկզբունքը պահելու մէջ: Միացեալ-Նահանգները հաճութեամբ կը միանան համաձայնութեանը, առանձնապէս նրա համար, որ այդ համաձայնութիւնը համապատասխանում է նրա ձգտումներին:

ՄՕՍԿՎԱ, Երրորդականի վճռով Վոյոչնիկով արդարացրած է: Դավիթով ճանաչված է լանցաւոր վինալիերի սալանման մէջ կողպտելու նպատակով, առանց կանխամիտ դիտարկութեան: Դատարանը դատաւարոցի Դավիթովին 8-ամսայ տաժանակը աշխատանքների և գրկեց նրան բոլոր իրաւունքներին:

9 հոկտեմբերի

ՊԵԿԻՆ, Բալիւի զօրաւորները գրաւեց Պաօտենֆու: Պեկինից դուրս եկած միլիարդային զօրաւորներն այստեղ հասնելուց առաջ, Ֆրանսիական զօրքերի վարժուցիչ օրինակելի է: Ֆրանսիական զօրքերը, որոնք մտել են միջազգային զօրաւորների կազմի մէջ, առանձնապէս լաւ ընդունվեցին ազգայնականութեան կողմից, որ գանգատվում է գերմանական զինուորների գործած կողոպտումներից: Բոլոր դիւղերում, սկսած Լուսոգուլֆեաօից, բարձրացրած էր ֆրանսիական դրօշակ: Զօռուչօռու գրաւված է 200 զինուորներով: Լուսոգուլֆեաօ դատարկվեց ֆրանսիական կապիտանի մի հասարակ առաջարկութեամբ: Գիրսին սպասում են Պեկինում այս շարափայ ընթացքում:

ԼՕՐԷՆՏՈ-ՄԱՐԿԵԶԷ, Կրիզէր ճանապարհը ընկաւ «Գերդերլադ» չորհանուով:

ԴՈՒՐԲԱՆ, Բուլլեր ուղևորվեց Անգլիա:

ՆԻՒԵՐՈՒԿ, Տեսանկէնից հաղորդում են, թէ Պաօտենֆուից ստացված զեկուցումներին նախելով դաշնակից զօրքերը դառն քաղաքը գրաւված մի առանձին ֆրանսիական զօրաւորների կողմից: Ֆրանսիացիները պնդում էին, թէ նրանց զօրաւորները ոչ այլ ինչ է, եթէ ոչ դաշնակից զօրքերի առաջնապահ գունդը, բայց ևս այնպէս, գերմանացիներն և անգլիացիները սաստիկ դժգոհ են, որ զրկվեցին ամենայն հոգաբարձութեամբ պատրաստած արշաւանքի պտուղներից: Չինական սուրհանդակները հաւատացնում են, թէ Պաօտենֆուի ճանապարհին գտնվող գիւղերում գերմանացիները և ֆրանսիացիները չափ անհրաժեշտ աւերումներ են կատարել: Ինչպէս լսվում է, Պաօտենֆուում կը թողնվի մի գերմանական ուժեղ զօրաւորներ: Պեկինից հոկտեմբերի 6-ին ուղարկված հեռագիրը հաղորդում է, թէ օտարերկրային դեսպանները դեռ եւս պատրաստված չեն վաղվան տեսակցութեան Լի-Սունգ-Չանգի և Տինի հետ: Տեսակցութիւնը, երեւի, կը յետաձգվի: Վաղըրդէէ յայտնեց այսօր, որ պատերազմը համարում է վերջացած և սպասում է, որ իրան շուտով յետ կը կանչեն:

ՀՕՆԿՕՆԳ, Կանտոնից հաղորդում են, որ պատրաստվելու տարածվում է Արեւելեան գետի ուղղութեամբ: Չէկունի բնակիչները չեն հաւատում, որ զինուորական իշխանութիւնները ընդունակ կը լինեն պաշտպանել ազգաբնակչութիւնը: Չինացիներն ասում են, որ հոկտեմբերի 10-ին կը հասնի այն օրը, որ նշանակված է քրիստոնէական բոլոր միասնական ջանքեր և չինացի բոլոր քրիստոնէական իրաւունքները համար Գուանտունում:

ՆԻՒԵՐՈՒԿ, Պետական քարտուղար Գեյլ ֆրանսիական վերջին յայտագրին պատասխանի մէջ այն միտքն է յայտնում, թէ խաղաղութեան վերաբերեալ բանակցութիւնները պէտք է սկսեն պետութիւնները՝ հաւաքական կերպով յայտնելով չինական կայսրութեան հողային կալուածքների ամբողջութեան երաշխաւորութեան մասին մի կողմից և պահանջելով բաց և ազատ առեւտուր բոլոր ազգերի համար միւս կողմից:

ՖՐԻԴՐԻԽՍԶԱՖԷՆ, Տէպէլնի օդապարիկը բարձրացաւ երեկոյեան 5 ժամին, այդ պատճառով էլ անում եւ հասաւ 400 մետր բարձրութեան, դէպի երկիրն իջաւ հանդարտ և բարեխաղ կերպով:

ՄԱՐԻԻԴ, Ի նկատի ունենալով միմիայն Սիլվէյայի հետ ունեցած տարաձայնութիւնը, միմիայնների խորհուրդը վճռեց վստահութեան հարց դնել թագուհի-ինամակալուհուն: Եօթը ժամին միմիայնները կերթան պալատ՝ միմիայնութեան հրաժարականը տալու համար: Չէ կարելի նախատեսել, թէ ինչ որոշում կընդունէ թագուհի-ինամակալուհին:

ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԹԻՖԼԻՍ, Հին թատերասեր. Յայտնեցէ ձեր հասցէն խմբագրութեան:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆՔԱՆ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏՐԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍՏԱՆԿ ՄԷԼԻԲ-ԱՂԱՄԱՆԵԱՆ:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Շաբաթ, հոկտեմբերի 21-ին, երեկոյեան 10 ժամին, նշանակված է Թիֆլիսի ժողովարանի պ.պ. անդամների ընդհանուր ժողովը:

Զբաղմունքի առարկաներն են՝ 1) փոխառութիւն պահեստի դրամադրից որոշեալ գումարի ժողովարանի կարիքների համար: 2) ժողովարանի անդամներից մէկի վարժուցի մասին: 3) աւագներից մէկի հրամարականը աւագի պաշտօնից: 4) թեկնածուների ըուէարկութիւն:

(Խ. հ. շ.) 1—3

Անգլիական լեզուի

Երկրորդ և երկրորդ կուրսերը կը սկսին հոկտեմբերի 10-ից Մ. Մուրադի մօտ, Մադատովսկայա, № 4, կարելի է տեսնել ժամը 4-ին: Նշանաւոր չափով զիջումն մի քանի հոգու միասին: 1—2

Լոյս տեսնւ և վաճառվում են

ԿԱՐԱՊԵՏ ԱՓԻՆԵԱՆԻ

1901 թ.

Մ Ո Յ Ի և Պ Ա Տ Ի

Օ Ր Ա Յ Ո Յ Յ Ն Ե Ր Ը

Մ ո յ ի օրացոյցը դարդարված է Ներսէս Մ Կաթողիկոսի, Մ. Նալբանդեանի, Բաֆիի և Յ. Այվազովսկու պատկերներով, ունի բոլորովին նոր և հեռաքրքիր յաւելում՝ ամենաօգտակար տեղեկութիւններով, ընդարձակ բժշկական, հարուստ երգչահան ու նոր գուարճայի վիճակարան:

Պատի օրացոյցի մէջ կան բարոյական խրատներ և ընտիր մտքեր, հայոց եկեղեցական պատմութիւնից հատուածներ, գուարճայի պատմութիւններ, բոլորովին նոր ծիծաղալարժ առակներ (մեծ մասամբ անտիպ), այլ և ժողովրդական առանձին, ժողովրդական երգեր, զիւղական լէլէներ, ընտիր բանաստեղծութիւններ, գուարճայի հանելուկներ, շուտասուրէլներ, բժշկական, արհեստագիտական և այլ օգտակար ու հետաքրքիր տեղեկութիւններ: Տարտակը չքեղ և ճաշակով պատրաստված է յայտնի լիտօգրաֆիայում, 15 դրոյով: Ցանկացողները մանրամասն բովանդակութիւնը տրպագրված առանձին թերթով կարող են ստանալ ձրի:

Գները՝ ծ ո յ ի ռ — 20 կօպ., պ ա տ ի ռ — 50 կօպ. գումարով գնողներին լինում է զիջում:

Դիմել՝ Александрополь. Карапету Апинян, կամ Alexaandrople Karapet Apinian (Caucase): Ցանկացողները թող չտապնեն, որ իր ժամանակին կարողանանք պատուէրները ձեռնարկելու կատարել:

(Խ) 1—12

НОВОЕ
ФРАНЦУЗСКОЕ
ПЕЧЕНИЕ
C. C. IYK^o
PETIT BEURRE
МОСКВА
C. C. IYK^o

Շուտով լոյս կը տեսնի
ՄԵԿԱՐ 2ՄՇԿԵԱՆԻ
«ՏՈՒՑԻ», «ՊԱՏԻ», «ԱՆԴԱՆԻ» և
«АРМЯНСКИЙ КАЛЕНДАРЬ»
1901 թ. ՕՐԱՅՈՑՑՆԵՐԸ

Ցանկացողները թող վաղօրօք յայտնեն, որպէս զի ժամանակին կարողանան ստանալ:
(Խ. շ.) 4—15

Ընկերութիւն
ԲՐՈԿԱՐ ԵՒ ԸՆԿ.
Առամի հեղուկ—
ԷԼԷԿՏՐ
Ամենանոր ախտահանական միջոց:
Մօակվայի Բժշկական Վարչութիւնից
Թոյլ տուած՝ որպէս մի միջոց, որ չէ պարտական իր մէջ առողջութեան համար
որ և է վնասակար նիւթ:
ՄՐՈՒԱԿԸ 75 ԿՕՊԷԿ
(ամ. 10) 2—10

ԲՕՄԲԵՅԻ ԵՒ ՑԵՅԼՕՆԻ

Բօմբէյի և Ցէյլօնի առաջնակարգ թէյի տուներու հետ ուղղակի բանակցութեան մտած և այս անգամ Բօմբէյի ընտիր թէյերէն զանազան տեսակներ բերել տուած ենք խիստ զիւրաւանքով զիններով:

Ամեն անոնք՝ որք կը փափազին արժան և ընտիր թէյ գնել մեծաքանակ, թող հաճեն դիմել մանրամասնութեանը համար Մայսուրաձէ և Սօլախարուխով քարավանսարան, թիւ 16, Հայկ Փէշտիմալեանի գրասենեակին:

Գիշ օրէն նաեւ կը ստանանք Ցէյլօնի թէյերէ կարեւոր բաւթի մը, որոնք արդէն ճամբայ եկած են:

(Խ. ու.) 10—10

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆՔԱՄԻԱՆ

Տեղափոխվեց նոր բնակարան—Նիկոլաեվսկայա փողոց № 46. (Николаевская ул. № 46):

(Հ. ուր. շ.)

11—15

ՀԱՇՈՒՄՊԱՆՈՒԹԵԱՆ ԴԱՐՆԹԱԳԵՐԻ XI շՐՋԱՆ
ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆՔԱՄԻԱՆ
Հեղինակ «Ձեռնարկի առեւտրական և գործարանական հաշուապահութեան ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ»
Երկու սեւի անձանց՝ 4 ամսով ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելու և եղած դէպքերում լսնալ և անուն պաշտօնի առաջարկելու:
ՊԱՐԱՊՄՈՒՄԻ ԿԻՄԵՆԵՆ
Ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առեւտրական ձևերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերտիկի գործարանական հաշուետեւութեան:
Բ) Առեւտրական թուաբանութիւն:
Գ) Առեւտրական նամակագրութիւն:
Դ) Գեղագրութիւն և ամենապատմական ձեւերի ուղղելու:
Պարապմունքները սկսվելու են 1900 թիւ սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ, և պարբերաբար շարունակվելու են իւրաքանչիւր 20 ՐՄ ամսից յետոյ. իսկ կիրակի օրերը լինելու են առանձին գործնական պարապմունքներ:
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, Կ Ո Ւ Կ Ս, Նիկոլաեվսկայա փողոց, սեփական տուն, № 46: (Николаевская ул. № 46):
Վերջիցս հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍԻՍԻՄ, հեղինակի մօտ, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրաւաճառանոցներում: ԳԻՆՆ Է 3 Ր. 50 կօպէկ: Օտարաքաղաքացիները վրէժը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստի ծախս վճարելու:
(Խ. հ. շ.) 30—30

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՅՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբաթ մի անգամ:

Եւ հակառակը՝ Բաթումից Մարսէլ, մտնելով Տրապիզօն, Սամսոն և Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի, 11 ձև հոկտեմբերի—չորեքշաբթի, ԱՆԱՏՕԼԻ կապիտան ԲԻԱՆԿԻ և Կարպէս շարունակաբար, երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են օւլորականից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անապոլայէն մէջ, ընդունելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար թող ըարհանանք զիմէլ ընկերութեան գործակալարաններին:
ԲԱՏՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր ԴԱՐՆՈՒՅԻ, Նաբէլէֆնայա ԹԻՖԼԻՍԻՍԻՄ—պ. Օ. Գ. Բարկինդանեանին, Սիօնի փող. Սօլախարուխով և Մայսուրաձէի քարավանսարան: ԲԱԳՈՒ—Եղբ. Վ. և Ի. Մուսաֆեաններին, Նաբէլէֆնայա փողոց, տուն Կրասնիկովի, № 27: ՆՕՎՕՐՕՍՍԻԲՍԿ—Վաղդիկաւագի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Խ. հ. շ.) 3—20

Մ Ի Հ Ա Յ Ո Ւ Հ Ի,
որ գիտէ, ֆրանսերէն, ռուսերէն և մուղիկա, ցանկանում է մի կամ երկու աղջկայ հետ պարակել Թիֆլիսից դուրս: Հասցէ՝ Лабораторная, № 5, д. Цуринова, кв. Шароевой.
3—3

ԲԺԻՇԿ Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ
վերադառնալով Թիֆլիս, վերանորոգեց բերանի խոռոչի և առամների հիւանդութիւնների բժշկութիւնը: Ընդունելութիւնը առաւօտեան 10—2 ժ. եւ երեկ. 5—7 ժ. իր նոր բնակարանում, որ գտնվում է հին բնակարանին կից, Վելյամինսկան փող. տ. Գարուպեանի, № 4. [Вельяминовская ул. № 4, домъ Карташянъ].
21—25

Առամների և բերանի խոռոչի հիւանդութիւնների
ԲԺԻՇԿ ՆԻԿ. ԿԱՃԿԱՃԵԱՆ
ընդունում է հիւանդներ առաւ. 10—2 ժ. եւ երեկ. 5—7 ժ.: Երեւանեան հրապարակ. տ. Սարգիսեանի. РОИВОВЪ-ի լուսանկարչական գործարանի տակը: ЭРИВАНСКАЯ ПЛОЩАДЬ, домъ Шарозова.
(Խ. հ. շ.) 20—25

ՓԱՍՏԱԲԱՆ (աղվօկատ)
Եղիշէ Տեր-Ազարեանց
այժմ բնակվում է Շուշափրոուս 2—3

Երրորդակ հաւատարմատարի օգնական
ԳԵՌՐ ԳՈՎՀՆՆԻՍԵԱՆ
— Ա Տ Ո Մ Ե Ա Ն —
տեղափոխվել է Դավիթօվսկայա փողոց (Գօլօվինսկի պր., զիմիւր, Գվաւտուայի տունը, № 5.
4—5